**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հուլիսի 2026թ. թիվ 502-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի թիվ 384-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 21-րդ և 22-րդ կետերով՝

Ո ր ո շ ու մ  եմ.

1. Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականի «Բուսաբուծության աջակցության» ծրագրի իրականացման ընթացակարգը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում իրականացնել ընտրանքային մոնիթորինգ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի ապրիլի 16-ի N 1078-Լ հրամանով սահմանված կարգով:

2. Լոռու մարզում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-14 17:15:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 14
ք.Վանաձոր